

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1 4 3
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2016թ. հոկտեմբերի 31-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայում հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների թեմաների բաշխման և կատարման աշխատանքների քննարկման հարցը:

Ձեկուցող՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

2. Քաղաքագիտության ամբիոնի առարկայական ծրագրերի հաստատման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

3. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Ռաֆֆի Գազիկի Նալչաջյանի և քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Լիլյա Հայկի Ավագյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

4.

1. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայում հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների թեմաների բաշխման և կատարման աշխատանքների քննարկման հարցը:

Ձեկուցող՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

Ձեկուցողը ներկայացրեց մագիստրատուրայում հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների թեմաների բաշխման և կատարման հաշվետվությունը (հաշվետվությունը կից ներկայացվում է)

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Ա.Գևորգյանը:

Որոշեցին՝ մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների թեմաների բաշխման և կատարման աշխատանքները գնահատել բավարար:

2. **Լսեցին՝** Քաղաքագիտության ամբիոնի առարկայական ծրագրերի հաստատման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Ձեկուցողը ներկայացրեց, որ քաղաքագիտության ամբիոնում 18.10.2016թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և ակադեմիայի գիտական խորհրդին միջնորդում են

հաստատել հետևյալ առարկայական ծրագրերը՝

1. Ազգային անվտանգություն
2. Աշխարհաքաղաքական հիմնախնդիրները տեղեկատվական դարաշրջանում
3. Գիտության տեսություն և գիտահետազոտական աշխատանքների կատարման մեթոդոլոգիա
4. Գլոբալ և տարածաշրջանային քաղաքականություն
5. Գլոբալ կառավարում
6. Էթնոքաղաքականություն
7. Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականություն
8. Ժամանակակից գաղափարական հոսանքներ
9. ԻԻՀ և Մեծ Մերձավոր Արևելք
10. Կուսակցություններ և կուսակցական համակարգեր
11. Համեմատական քաղաքագիտություն (տրանզիտոլոգիա, կոնսոլիդալոգիա)
12. ՀՀ ինտեգրացիոն գործընթացներ
13. Միջազգային իրավունք
14. Մշակութաբանություն
15. Ուժի դրսևորման գործառույթները միջազգային քաղաքականության և անվտանգության համատեքստում
16. Պատերազմի և խաղաղության մշակույթ
17. Պետականաշինության մշակույթ
18. Տարածաշրջանային քաղաքական զարգացումներ և ՀՀ արտաքին քաղաքականություն
19. Տարածաշրջանային օտար լեզու /պարսկերեն, թուրքերեն, վրացերեն/
20. Քաղաքական անթրոպոլոգիա
21. Քաղաքական բանակցություններ
22. Քաղաքական գլոբալացում
23. Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ
24. Քաղաքական լիդերություն
25. Քաղաքական կառավարում և PR
26. Քաղաքական հաղորդակցություններ և GR կապեր
27. Քաղաքական հերմենևտիկա (տեքստագիտություն)
28. Քաղաքական վերլուծություններ և կանխատեսումներ
29. Քաղաքականության տեսություն
30. Քաղաքատնտեսություն

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը:

Որոշեցին՝ Հաստատել քաղաքագիտության ամբիոնի ներկայացրած առարկայական ծրագրերը:

3.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի և քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Լիլյա Հայկի Ավագյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների

հաստատման հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը նշեց, որ՝

1. Իրավագիտության ամբիոնում 2016թ. հոկտեմբերի 31-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է առկա ուսուցմամբ ասպիրանտ Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի թեկնածուականատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի թեկնածուականատենախոսության թեման հաստատել «Ֆինանսական վերահսկողության իրավակարգավորման հիմնահարցերը» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Էդգար Էդուարդի Շաթիրյանին:

2. Քաղաքագիտության ամբիոնում 2016թ. հոկտեմբերի 18-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիլյա Հայկի Ավագյանի թեկնածուականատենախոսության թեմայի հաստատման և գիտական համաղեկավար նշանակելու հարցը:

Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Լիլյա Հայկի Ավագյանի թեկնածուականատենախոսության թեման հաստատել «ԱՄՆ-ի հայկական լոբբիի գործունեությունը և ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայ Դատի նկատմամբ» վերտառությամբ՝ ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական համաղեկավար նշանակել քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Ա.Եզեկյանը:

Որոշեցին՝

1. Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի թեկնածուականատենախոսության թեման հաստատել «Ֆինանսական վերահսկողության իրավակարգավորման հիմնահարցերը» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Էդգար Էդուարդի Շաթիրյանին:

2. Քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Լիլյա Հայկի Ավագյանի թեկնածուականատենախոսության թեման հաստատել «ԱՄՆ-ի հայկական լոբբիի գործունեությունը և ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայ Դատի նկատմամբ» վերտառությամբ՝ ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական համաղեկավար նշանակել քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանին:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

31 հոկտեմբերի 2016թ.

U.S.